68 Իջի՛ր, Արքա հզոր,

1. Իջի՛ր, Արքա հզոր,
Անունդ՝ փառավոր,
Տուր, որ գովենք:
Ամենատեր եղող,
Ամեն տեղ միշտ հաղթող,
Եղի՛ր մեզ վրա տիրող,
Քեզ կ’աղաչենք:

2. Իջի՛ր, Հիսուս Փրկիչ,
Եղի՛ր մեզ պահպանիչ,
Մեզ միշտ օգնե՛:
Քու օգնությունդ մենք,
Մեզի պարիսպ ընենք,
Քու վրադ մեր հույս դնենք,
Տե՛ր, մեզ լսե՛:

3. Իջի՛ր, ով Սուրբ Հոգի
Եվ հիմա տուր մեզի
Վկայություն,
Թե Տերն մեզ կը սիրե,
Մեր սիրտն ա՛ռ,
Դուն տիրե՛,
Մի՛ հեռանար մեզմե,
Հոգի սիրուն:

4. Ո՛վ Դու, Եռեակ և Մի,
Մեծ գովությունք Քեզի
Անդուլ տրվին:
Քու փառքդ տո՛ւր, որ մենք
Երկնից մեջ վայելենք
Ու Քեզ փառաբանենք,
Տե՛ր երկնային: